

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐ. ՂԱՓԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ Խնկական առդամ

Լ Ե Զ Ո Ւ Ն Ե Ր Ի

ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՍՏԱԴԻԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ն. ՄԱՌԻ
ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1951



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

408
շ-50

ԳՐ. ՂԱՓԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1951 թ.

Լ Ե Զ Ո Ւ Ն Ե Ր Ի

ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՍՏԱԴԻԱԼԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ն. ՄԱՌԻ
ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ԺԵԺԺ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1951

A $\frac{\pi}{12653}$

ГР. КАПАНЦЯН

О С Н О В Ы
ГЕНЕАЛОГИЧЕСКОЙ КЛАССИФИКАЦИИ
ЯЗЫКОВ И КРИТИКА ВЗГЛЯДОВ Н. МАРРА
НА СТАДИАЛЬНОСТЬ РАЗВИТИЯ ЯЗЫКА

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР, Ереван, 1951 г.

Ինչպիսի հայտնի է, հնում քերականությունը և բանասիրությունը հույների, հռոմեացիների, հնդկիների և արաբների համար զուտ գործնական կամ կիրառական առարկաներ էին, որոնք ուսուցանում էին ճշտորեն օգտվել գրական լեզվից և մեկնաբանել նրա բնագրերը: Քերականության՝ resp. լեզվի համար, չէին գրվում ծագումնաբանական հարցեր, չկար կապակցում մեռած կամ կենդանի այլ լեզուների հետ, եթե հաշվի չառնենք սեմական լեզուների ազգակցության կամ ընդհանրության մասին եղած մեկնաբանությունների որոշ փորձեր, որ արվում էին 17-րդ դարի սկզբում: Բայց մի քանի սեմական լեզուների պատմական ընդհանրության հնարավոր սահմանման այդ մոտեցումը չդարձավ լեզվաբանության բնագավառում նոր առարկայի հիմնադրման կամ զարգացման սկիզբը, այսինքն՝ պատմական լեզվաբանության, որը լեզուն ուսումնասիրում է նրա զարգացման և փոփոխությունների մեջ, ուրիշ լեզուների հետ ունեցած նրա կապի, նրա ծագման և այլնի մեջ: Այդպիսի հնարավորություն առաջ եկավ արդեն 19-րդ դարի առաջին քառորդում՝ այսպես կոչված հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության հիմքի վրա: Այդ ժամանակ, երբ կապիտալիզմը ապրում էր յուր աճման շրջանը և ստեղծվում էր նոր քաղաքակրթություն, նոր դիտությունը՝ լեզվաբանությունը այլևս չէր կարող լինել «աստվածաբանության աղախինը», նա ազատվեց միջնադարյան սխոլաստիկայից և կազուիստիկայից, իսկ նվիրդայի իշխող ժողովուրդների լեզուների ուսումնասիրությունը, բնականաբար, խոստանում էր նրանց ավելի մեծ հաջողություն ոչ հօրինակ սեմական լեզուների ուսումնասիրության 17-րդ դարի սկզբում: Հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեթոդոլոգիան՝ նախալեզվի վերականգնումով և այլն՝ փոխանցվեց նաև այն գիտնականներին, որոնք ուսումնասիրում էին

լեզուների այլ տիպերի կամ ներկայացուցիչների ազգակցությունը, լեզուներ, որոնք տրամագծորեն տարբերվում էին հնդեվրոպական այդ լեզուներից: Շատ բանով դա սխեմատիկ էր ու ձևական:

Հիշենք այդ նոր լեզվաբանություն, որպես պատմական առարկայի, դրական գնահատականը, որ տվել է էնգելսը յուր «Անտի-Դյուրինգի» մեջ (3-րդ բաժին, 4-րդ գլուխ): Գերմանական լեզվի ֆրանկյան բարբառի մասին յուր աշխատության մեջ էնգելսը դրականորեն է արտահայտվում պատմահամեմատական մեթոդի մասին և հայտարարում է սլավոնական լեզուների համեմատական քերականության ուսումնասիրության մեջ զբաղվելու յուր մտադրությունը, բայց, ըստ նրա խոսքի, քանի որ Միկլոշիչը փայլուն կերպով գլուխ բերեց այդ աշխատանքը, ապա նա հրաժարվեց այդ ձեռնարկումից: Այդ աշխատանքը Միկլոշիչի կողմից ի կատար ածվեց պատմահամեմատական մեթոդով, որը մեր ժամանակ Մառի և նրա «աշակերտների» համար դառել էր այնքան անտեղի՝ Վերջապես Ֆ. էնգելսը խոսում էր լեզվի՝ Դյուրինգի խոսքով ասած՝ «նյութի և ձևի» մասին, որոնք, հակառակ Դյուրինգի, պետք է պատմականորեն հայտնաբերվեն իրենց համեմատական ուսումնասիրությամբ՝ ազգակից լեզուների մեծած և կենդանի ձևերի հետ: Նա ասում է. «Բայց «մայրենի լեզվի բառամթերքն ու ձևը» հասկանալի են դառնում միայն այն դեպքում, երբ ուսումնասիրվում է դրա ծագումը և աստիճանական զարգացումը, իսկ այդ հնարավոր չէ, եթե նկատի չեն առնվում առաջին՝ այդ լեզվի սեփական մեծած ձևերը և երկրորդ՝ նրա ցեղակից կենդանի և մեծած լեզուները» (Ֆ. էնգելս, «Անտի-Դյուրինգ», Երևան, 1940 թ., էջ 436):

Դրական իմաստով է գնահատում պատմահամեմատական մեթոդը նաև ընկեր Ստալինը: «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» յուր աշխատությունում նա ասում է հետևյալը. «Ն. Յա. Մառը պատմա-համեմատական մեթոդը ճշգրտան կերպով անվանարկում է որպես «իդեալիստական»: Այնինչ, պետք է առել, որ պատմա-համեմատա-

կան մեթոդը, չնայած իր լուրջ թերություններին, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան Ն. Յա. Մառի իրոք իդեալիստական քառատարր անալիզը» (էջ 71):

Ինչպես տեսնում ենք, լեզուների, նրանց լեզվական տարրերի պատմահամեմատական ուսումնասիրությունը՝ համեմատական (կոմպարատիվիզմի) մեթոդով՝ գլխավորապես բառական (արմատների), ձևաբանական և հնչյունաբանական տեսանկյունով, չնայած և ունի պակասություններ, սակայն հայտնաբերել է շատ արժեքավոր նյութ այսպես կոչված ազգակից լեզուների (սլավոնական քերականություն), ինչպես և մի լեզվի էտապների զարգացման պատմության մեջ՝ սկսած նրա հնագույն գրավոր շրջանից («Պատմական քերականություն»):

Ազգակից լեզուները համեմատելու մեթոդը՝ վերցնելով նրանց համեմատովոլ տարրերը առավել հին ձևով կամ վիճակով, հայտնաբերում է այն ընդհանուրը, որը երբևէ եղել է նրանց մեջ որպես հիմնական հին որակ (բառարմատ, մասնիկ): Համեմատության մեթոդը՝ որպես միակը այժմ մեր տրամադրության տակ, պիտանի է նույնպես երկու և ավելի ոչ ազգակից լեզուների համեմատության համար՝ ի հավաստումն այս կամ այն քերականական կարգի և ալլնի տարբերությամբ առկայության՝ կախված նրանց զարգացումից, մտածողությունից և ընդհանրապես հնության աստիճանից, որը մեզ նյութ է տալիս ընդհանուր լեզվաբանության և լեզվաստեղծման համար:

Պատմահամեմատական վերլուծական մեթոդը, ինչպես տեսնում ենք, սահմանում է լեզուների այսպես կոչված ազգակցությունը, նույնպես և ազգակից լեզվախմբեր, կամ, ինչպես նաև հորջորջում են, լեզվաընտանիքներ, որոնց թիվը այժմ սահմանվում է մինչև տասնյոթ: Մեզ բավական է հավաստել, որ մեռած կամ կենդանի լեզուների որոշ թվի մեջ առկա է լեզվական ընդհանուր, միմիայն դրանց հատուկ էջեմենտների (արմատական, ձևաբանական, հնչյունաբանական) որոշ քանակ, որպեսզի նրանց ազգակից համարենք: Սովոր-

բարար այդպիսի լեզուների ազգակցությունը դուրս են բերում այդ լեզուների մի աղբյուրից հյուղավորելով կամ տարբերակելով, այսինքն՝ այսպես կոչված նախալեզվից, բայց այդ միշտ չէ, որ ճիշտ է. լեզուների ազգակցությունը կարող է արդյունք լինել նաև նրանց հետագա մերձեցման կամ փոխադարձ ներթափանցման՝ շնորհիվ հասարակական-տնտեսական, էթնիկական և քաղաքական այն պայմանների, որոնք նպաստում են նրանց համախմբմանը, շփմանը կամ ազդեցությունը: Համեմատյն դեպս, լեզուների միջև եղած ազգակցության պատճառները յուրաքանչյուր պարագայում պետք է կոնկրետ սահմանվեն, որովհետև, օրինակ՝ ուղմանական լեզուների ազգակցությունը և թյուրքական լեզուների ազգակցությունը չեն կարող իրենց սկզբնապատճառների մեջ միասման մեկնաբանվել:

Վերջապես, լեզուների ազգակցությունը կարող է լինել մոտավոր և հեռավոր: Օրինակ՝ ուսաց լեզուն ավելի մոտ է ուկրաիներենին և բելոռուսերենին, քան լեհերենին և չեխերենին կամ բալթական սլավոնական լեզուներին, սակայն նրանք բոլորը, որպես ընդհանուր սլավոնական լեզուներ, իրար ավելի մոտ են, քան բալթյան լեզուներին, այսինքն՝ լատիշական, լիտվական և մեռած պրուսական լեզուներին: Բայց այդ քալթիկ-սլավոնական լեզուները ևս իրար միջև համեմատաբար ավելի մեծ մոտիկություն են դրսևորում, քան այդ խմբերից յուրաքանչյուրը գերմաներենի, կելտերենի և մյուս հնդեվրոպական լեզուների նկատմամբ, որոնք բոլորը միասին կազմում են մի ընդհանուր, առավել կամ պակաս ազգակցական լեզվաընտանիք: Այդ իրողություն է, որ ենթակա չէ կասկածի, և մի քանի լեզվաբանների, առանձնապես Ն. Մառի փորձը՝ դեն շարտել և չճանաչել լեզուների ազգակցությունը, որը որպես թե պայմանավորված է նախալեզվով, քննադատության չի դիմանում: Այստեղ գործ չունեն «նախալեզուները» և նրանցից դուրս բերվող ուսայականությունը, որը Ն. Մառի և նրա կույր հետևորդների թեթև ձեռքով վերագրվում է պատմահամեմատական լեզվաբանության կողմնա-

կիցներին: Հարյուր անգամ իրավացի է ընկեր Ստալինը, երբ պնդում է. «Ն. Յա. Մառը մեծամտորեն արհամարհում է լեզուների խմբերի (ընտանիքների) ուսումնասիրության առին մի փորձ, որպես «նախալեզվի» թեորիայի դրսևորում: Այնինչ, չի կարելի ժխտել, որ, օրինակ, այնպիսի ազգերի լեզվական ազգակցությունը, ինչպիսիք են սլավոնական ազգերը, անտարակուսելի է, որ այդ ազգերի լեզվական ազգակցության ուսումնասիրությունը կարող էր մեծ օգուտ բերել լեզվաբանությանը՝ լեզվի դարգացման օրենքներն ուսումնասիրելու գործում: Ես արդեն չեմ ասում, որ «նախալեզվի» թեորիան ո՛չ մի աննշություն չունի այս գործի հետ» («Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ», էջեր 71—72): Ինչպես տեսնում ենք, «նախալեզվի» այդ սոստությունը դոգմատիկների և լեզվաբանության մեջ պոլիտիկանություն անող անարխիստների մոտ վեր էր ածվել մի խրտվիլակի, յուրատեսակ մի պիտակի, որ հեշտությամբ փակցվում էր իսկական պատմաբան-լեզվաբաններին, որոնք գործ ունեին կոնկրետ լեզվական իրակությունների հետ: Առանց այդ լեզվական իրակությունների գիտելիքի և նրանց կոնկրետ գույացման ու դարգացման իմացության, մտահայեցական և մետաֆիզիկ մոտեցումը ոչ գիտական է, ոչ պատմական և ոչ էլ մատերիալիստական:

Ազգակից լեզվական տարրերի ի հայտ բերումը կատարվում է ճշտորեն հաստատված հնչյունաբանական համապատասխանություններով, որոնք հենց դրանով դառնում են կարծես թե օրինաչափական: Օրինակ՝ հայերենը յուր որոշ, թեպետև համեմատաբար ստորադաս (երկրորդական) շերտով ազգակցում է հնդեվրոպական լեզուների հետ, և այդ տեսանկյունով կարելի է համեմատել, օրինակ՝ հայերեն տամ «տալիս եմ» և ռուսերեն дать, հայերեն սիրտ և ռուսերեն сердце (сердиться, сердобольный և այլն), հայերեն տուն և ռուսերեն дом, հայերեն տալգր և ռուսերեն деверь, հայերեն տառն և ռուսերեն десять և այլն, ընդորոմ հնչյունաբանական ճիշտ համապատասխանություն է առհասարակ հայերեն

տ-ի և ուռա. Ա-ի միջև: Բայց հայերենն դուռն, ուռանքեն дверь, հայերենն դենմ, ուռանքեն деть, հունարենն titheimi (դենում ճմ) և այլն, տալիս է մի ուրիշ օրինաչափություն. հայերենն դ-ն առաջացած *դհ-ից: Ն. Մառը յուր լեզվաբանական գործունեության սկզբնական շրջանում կարծես թե փորձեց հետևել համեմատովող լեզուների հնչյունական համապատասխանությունների սահմանման և համեմատության այդ մեթոդներին, օրինակ՝ սեմական լեզուների և վրացական լեզուների, ճանա-մեագրելական և քարթական լեզվական ճյուղերի կամ նրանց և հայերենն լեզվի ազգակցության սահմանման առումով: Բայց հետագայում նա դրանից հեռացավ և հայ-վրացական ընդհանուր տարրերի համեմատության ընթացքում ընկավ բացարձակ հակապատմականության մեջ, երբ հետագայում, օրինակ՝ համեմատում էր հայերենն եղրայր և վրացերենն մեգոբարի «բարեկամ», հայերենն իղծ «կախարդ» և վրացերենն մղվղելի «բահանա» բառերը և այլն՝ մոռանալով, որ հայերենն դ ձայնեղը չի կարող համապատասխանել վրացերենն գ-ին կամ դ-ին, որովհետև հայերենն դ-ն առաջացել է հին կոշտ ի-ից (ԱԵ)։ Սա արդեն չեմ շողափում հնչյունական համապատասխանությունների նկատմամբ Մառի հետագա էվոլուցիան, որտեղ հիրավի «ամեն հնչյուն փոխվում է ամեն հնչյունի», ինչպես պատկերավոր կերպով արտահայտվել են որոշ գիտնականներ (Կրիմսկի, Զաչեման)։ Թողնում եմ նույնպես նրա պրուկրուատության մահիճի մեթոդը, երբ նա, օրինակ, վրացական բառերը արհեստականորեն զուգադրում էր սեմական բառերի հետ, որտեղ միաբաղաձայն կամ երկբաղաձայն վրացական արմատը միտումով լրացնում էր նոր ենթադրյալ բաղաձայններով, որպեսզի նախկին արմատի նրանց այդ շինծու եռաբաղաձայն տեսքը համեմատի սեմականի օրինաչափ եռաբաղաձայն արմատների հետ՝ իհարկե կանխամտածված հնչյունական համապատասխանություններով և փոփոխություններով։ Հետագայի զարգացասկը հանդիսացան արդեն նրա չարաբաստիկ չորս էլեմենտները, որոնք իրենց հնչյունափոխային լարախաղացության մեջ հիրավի ոչ սահմաններ ունեին և ոչ պայմաններ։

Ինչպես վերը շարադրվածից տեսնում ենք, լեզուների կյանքում կարող է ստեղծվել և ձևավորվել նրանց հատուկ բառական և ձևաբանական տարրերի որոշակի միջուկ, որը կարող է պատմականորեն վերաբաշխվել և տարածվել լեզվական նոր միավորումների վրա, նրանց նոր ներկայացուցիչների վրա՝ պահպանելով հնչյունաբանական որոշ փոխհարաբերություններ։ Այդ կապը, որ որոշակի հանդես է գալիս որոշ պատմական շրջաններում, ընդունված է կոչել ազգակցական, իսկ լեզուների դասակարգումը այդ հիման վրա՝ ծագումնաբանական, այսինքն՝ դասակարգում՝ ըստ ծագման, ըստ ազգակցության, որ կարող է լինել մոտիկ, այսինքն՝ սերտ կամ հեռու, այսինքն՝ թույլ։ Եվ եթե հաջողվեց ժամանակակից շատ լեզուներ, ներառյալ և մի քանի մեռած գրավոր լեզուներ, ծագումնաբանորեն դասակարգել տասնյոթ խմբի, ապա այդ դեռ չի նշանակում, որ մեզ հայտնի քոլոր լեզուները մասնում են այդ ծանոթ կամ ուրիշ, մեզ անհայտ ծագումնաբանական խմբավորումների մեջ։ Այդ վերջին «անազգակից» լեզուների մեջ սրոշ հատկանիշներ կարող են նմանվել ըստ ազգակցության արդեն որոշված լեզուներին, բայց այդ բոլորովին անբավարար է, և այդ առանձին կանգնած լեզուները, ինչպես ճապոներենը, բասկերենը, սոմերերենը, էլամերենը և մյուսները առայժմ չեն կարող ծագումնաբանորեն մեկնաբանվել և դասակարգվել։ Անկամած, այդպիսի միայնակ լեզուները մի ժամանակ շատ են եղել, և հնարավոր է, որ նրանք էլ մտած են եղել իրենց դրացի՝ մեզ անհայտ մեռած լեզուների հետ որոշ մերձավոր հասարակական-պատմական աղերսի ու ներթափանցությունների մեջ։

Հարց է առաջ գալիս, իսկ Մաուրի¹ն էր հակադրում այդ ծագումնաբանական դասակարգմանը, ինչու էր մերժում այն։

Ըստ մի քանի գիտնականների, և առաջին հերթին Ն. Մաուրի Վեդժ մտալրացման, այդ ծագումնաբանական դասակարգումը որպես թե ստեղծում է լեզուների որոշ խմբերի հա-

մար նախալեզուներ, իսկ այդ նախալեզուները հեշտովյամբ կարելի է վերածել մի միասնական նախանախալեզվի, այլ կերպ ասած մի լեզվի, որ գոյություն է ունեցել մարդկային խոսքի սկզբում: Բայց այդ ամենը նրանց ֆորմալ տրամաբանական մտքի ավարտումն է կամ առկա նախալեզվյան վարկանախան մտքի ավարտումը: Ոչ ոք հիմա չի պնդում այդ բոլոր նախաժողովուրդների, նախալեզուների և նախահայրենիքների իսկական պատմական գոյության վրա, նույնիսկ շատ բուրժուական գիտնականներ այդ համարում են զառանցանք: Մյուս կողմից մենք չենք կարող բացասել որոշ լեզվակացություն, կամ, ավելի ճիշտ միջուկ, իր բառապաշարով բառարմատներով, այսինքն այն, ինչ ընկեր Ստալինը կոչում է հիմնական բառաֆոնդ, և որոշակի քերականական տարրեր, որ առկա են այդ լեզուներում: Եթե հնդեվրոպացիները գնում էին դիմադրության ամենաթույլ ճանապարհով՝ առաջ քաշելով «նախալեզուներ», անշուշտ մենք պարտավոր չենք հետևել այդ ուղուն ամեն բանում, մենք պետք է տանք համապատասխան կոնկրետ պատմական բացատրություն և հիմնավորում: Իսկ եթե մեզ դեռ շատ բան պակասում է, հարկավ այդ մեթոդոլոգիայի արատը չէ՝ լեզուների ազգակցական խմբերի հիմնավորման մեջ: Պատմական բազմաթիվ պրոցեսների շգիտենալը դեռ փաստարկ չէ հօգուտ այն բանի, որպեսզի ժխտվի իբրև ելակետային սկիզբ որոշակի ընդհանուր լեզվական մատերիալ ունեցող լեզուների ազգակցությունը:

Ն. Մառը յուր «նոր ուսմունքի» մեջ կանխամտորեն ժխտում էր լեզուների ազգակցության ծագումնաբանորեն ճիշտ հիմնավորումը՝ շարունակելով այն կոչելով երբեմն բուրժուական, երբեմն ռեակցիոն, երբեմն աստվածաշնչական և այլն. իր կողմից, որպես հակակշիռ նա առաջ էր քաշում աշխարհի բոլոր լեզուների սկզբնավորումը ամենուրեք գոյություն ունեցած և ամեն բան նշանակող սալ, բեր, յոն, ոռ, կամ A, B, C, D չորս տարրերից, որոնց նույնիսկ որոշակի անուններ չէր տալիս: Եվ ահա որպես թե այստեղից գոյացան բոլոր լեզուները, իբրև տնտեսական-արտադրական անմիջա-

կան ազդեցութեան արդունք, որպէս վերնաշէնք բազիսի վրա՝ որողակի արտադրական հասարակական հեգեմոնով և նրա գաղափարախոսութեամբ, լինեն այդ անգամ մոգերի կոլեկտիվ կամ «դասակարգի» ներկայացուցիչներ, այսինքն՝ մի խմբի, որ հիմնված է ոչ թե արենակցութեան վրա, այլ կապակցված է «աշխատանքի և մոգական գործունեութեան» հետ՝ նրանց տոտեմական, կոսմիկական կամ այլ մտածողութեամբ և այլն: Ժխտելով մի քանի լեզուների մեջ առկա ընդհանուր մատերիալը, այսինքն՝ այն, ինչ որ պայմանականորեն կոչում ենք նախալեզու, Ն. Մառը փաստորեն առաջադրեց ավելի վատթար, կոսմոպոլիտական և ամեն ինչ ընդգրկող մի կոնցեպցիա, որի համաձայն մարդկային խոսքի սկզբում եղել է մի միասնական լեզվական պրիմիտիվ՝ չորս բառ-տարրերով, այսինքն փաստորեն հենց նույն նախալեզուն՝ իր իսկական նախնական վիճակում, բայց չորս հնչյունակոմպլեքսային տարրորոշված ձևավորումով: Ես, ինչպէս և ուրիշ շատ ընկերներ, որոնք մասնակցեցին «Պրավդա» թերթի դիսկուսիային, մատնանշում էինք այդ տարրերի անհեթեթութիւնն ու վանխակալութիւնը: Ի միջի այլոց մեզ ժամանակակից այդպիսի հնչյունային կոմպլեքսներ նույնիսկ չէին կարող լինել հարյուր հազարավոր տարիներ առաջ, եթե ինկատի ունենանք արդի հետամնաց ժողովուրդների և ցեղերի ներշնչական, շրթողական և աղմկային բնույթի վերապրական հնչյունների առկայութիւնը, օրինակ՝ բուշմենների և հոտենտոտների մոտ (Աֆրիկայում): Վերջապէս, փաստ է, որ կապիկները արտաբերում են մոտ երկու տասնյակ հնչյունաաղմկային կոմպլեքսներ, որ տարբերակում են ըստ իրենց բնականալայի (անտառների) և ըստ տեսակների: Նույնիսկ հավը վարող է մոտ հինգ տեսակ տարբերակել իր վշկշոցը՝ նայած թե վանջում է արդյոք ճուտերին, վախեցել է նա, քաղցած է, ձու է ածել և այլն: Մի՞թե նախամարդը պետք է իր՝ ըստ Մառի աղանդի միասնական նախալեզուն կառուցեր մատներից դուրս ծծված սալ, բեր, յոն, ռոշ հնչյուն-տարրերի վրա:

Հարց է առաջ գալիս, Մառին ինչու էր պետք այդ ամ-

բողջը: Այստեղ ըստ իս երևան եկավ ոչ այնքան այդ սալ, բեր, յոն, ոռ տարբերի և նման հնչումների առկայությունը մի քանի ուշ ցեղանունների (իտալ, իբեր, ռուս և այլն) մեջ, որքան ցանկություն՝ ծագումնաբանական դասակարգմանը հակակշիռ տալ յուր նոր դասակարգումը միասնական լեզվաստեղծման հիման վրա, մի դասակարգում, որը նա կնքեց «ստադիալ» անունով: Ինչպես հայտնի է, այդ «ստադիալ» դասակարգումը յուր անվանումով ու դասակարգումով և մասամբ յուր լեզվական էությունը քիչ բանով է տարբերվում Ա. Շլեգելի եռատիպ ձևաբանական դասակարգումից, որի մասին կխոսվի ստորև:

Բայց այնուամենայնիվ ես կուզեի նախապես որոշ չափով շոշափել հնչյունային լեզվի այսպես ասած ընդհանուր նախաշրջանը, այսինքն՝ գծային կամ ձևաբ-լեզուն, ինչպես առաջադրում էր Ն. Յա. Մառը: Հնչյունային խոսքի այդ նախաշրջանը Մառը հիմնավորում էր միմիկայի և առանձնապես ձևաբի շարժումների վրա, որպես մարդու առաջին գործիքի: Նա խիստ անջատում էր հնչյունային լեզուն այդ «ձևաբ-լեզվից», այնինչ այդ երկուսն էլ այն ժամանակ անշուշտ գոյակից էին: Ձևաբի շարժումները, անկասկած, ավելի հաճախակի էին, քան այժմ և ունեին ավելի բովանդակական գործադրություն: Բայց տարբեր հանգամանքներ, ինչպես խավարը, խոսողների յուրահատուկ դիրքը խոսելու ժամանակ, վերացականացման կամ ճշտման հնարավորությունների բացակայությունը, վերջապես, ձևաբի կապվածությունը կամ զբաղված լինելը աշխատանքի ժամանակ և այլն, ստիպողաբար առաջին տեղն էին մղում արդեն ոչ թե ձևաբերի շարժումները, որոնք հիմա մեծ մասամբ էմոցիոնալ դեր են խաղում, որ առանձնապես հարկավոր է գերասաններին, հոեոտորներին, մանկավարժներին և այլն, — այլ հնչյունային ազդանշանումը, որ ավելի հարուստ է, դյուրին, ազատում է ձևաբը աշխատանքի համար և իր զանազանաձևություն մեջ համարյա անսահմանափակ է:

Ն. Մառը բացարձակորեն գերազնահատում էր ձևաբի

դերը, որպես առաջին գործիքի: Բայց չէ՞ որ կենդանական վիճակից դուրս եկած հասարակական մարդու համար առաջին գործիքները եղան փայտից, քարից, ոսկրից և այլն արհեստականորեն ստեղծված այն գործիքները, որոնք և կանխորոշեցին տարրորոշ խոսքի սկզբնավորումը և աստիճանական դարգացումը, երբ աշխատանքից և աշխատանքի հետ միասին, ինչպես ասում է Յ. Էնգելսը, մեր արտասանական ապարատի նպաստումով, սկսում է ձևավորվել խոսքը: Խոսքը հենց սկզբից, կապիկի մարդայնացման պրոցեսում, հաղորդակցման միջոց էր, բանի որ պահանջվում էր մի բան հաղորդել, և ոչ թե աշխատանքային պրոցեսի կամ արտադրության անմիջական մի մասը՝ «մոզական աշխատանք-գործողության» հետ, ինչպես որ մեկնաբանում էր Մաուր: Եվ իզուր նա ժամանակակից լեզուների անթիվ քանակի արմատներ «ձեռք» բառից էր հանում, որը այնպես գայթակղում էր բազմաթիվ ժամանակակից մառիստների: Եթե արդեն բանը այդտեղ էր հասնել, ապա պետք էր ելնել, և այն էլ հազվադեպ, «քար», «գավազան», «նետ» և այլ տերմինների բառաստեղծական դերից և ոչ թե մտահայեցողներն «ձեռք» բառը վերածել նոր համանունների՝ «կին», «ջուր», «բրիչ» և այլ հասկացությունների համար:

Մի բանի վայրենի ցեղերի (հնդկացիների, նեգրերի) ձեռքերի օգնությամբ խոսակցությունը ես համարում եմ սովորական զվարճանք կամ մեկը մյուսին գերազանցելու հրմտության արտահայտություն, նման այն արհեստականորեն կազմված «ճնճղկալեզվին» (ծափ լեզու), որով երբեմն խոսում են մեր երեխաները: Մաուի այն վկայակոչումը, թե ձեռքի շարժումների միջոցով խոսում են նորապսակ երիտասարդ կանայք Մերձավոր Արևելքում, բոլորովին չի արդարացնում ձեռք-լեզվի սկզբնական լինելը որպես վերապրուկ, բանի որ այդ հանդիսանում է վնոշ ստրկացման հետևանք, որպես նոր սոցիալական երևույթ, որը իբր ի սեր համեստության արգելում է հարսների խոսել ի լուր ամենքի, այսինքն հնչյունային լեզվով խոսել սկեսուրի, սկեսրայրի և այլ բարձրագույն անձերի հետ: Բայց չէ՞ որ այդ աղջիկները ա-

մուսնանալուց առաջ ձեռք-լեզու չէին գործադրում: Հիմա էլ մարդիկ անծանոթ միջավայրի լեզուն շիմանալով դիմում են այդ ձեռք-լեզվին, որպես առաջիմ անխուսափելի միջազգային «լեզվի»: Ընդհանրապես, ինչպես տեսնում ենք, ձեռք-լեզվի տեսությունը, որ մինչև Ն. Մառը առաջ է քաշված եղել դեռ Վուլֆտի, Զելինսկու, Կնաուերի և այլոց կողմից, չի կարող այժմ համարվել գիտականորեն հաստատված, որպես հնչյունային խոսքի նախաշրջան. և իզուր էր Ն. Մառը պնդում այդ ձեռք-լեզվի վրա, համարելով այն իր գյուտը: Ավելացնենք նույնպես, որ ձեռք-լեզվի մասին Ֆ. Էնգելսն էլ չի խոսել «Աշխատանքի դերը կապկի մարդայնացման պրոցեսում» յուր աշխատության մեջ: Այդ թեորիայի մասին բացասական կարծիք է հայտնել և ընկեր Ստալինը՝ ընկ. Բելկինի նամակին տված պատասխանի մեջ:

Այժմ դառնանք Մառի ստադիալ դասակարգմանը՝ արդեն հնչյունային լեզվի վերաբերյալ, որպես իսկականի և համընդհանուրի: Ինչպես արդեն վերևում նշված է, Ն. Մառը բոլոր լեզուների ձևավորման և զարգացման հիմքում դնում է շորս սկզբնական հնչյունակոմպլեքսներ, որոնք կերպավորվելով ձևավորում են տալիս լեզուների բոլոր ժամանակակից բառարմատներին և նրանց մասնիկներին կամ ձևույթներին: Իսկ լեզուները, ըստ Մառի, իրենց զարգացման որոշ, որակապես տարբեր աստիճանների փոխակերպվելով՝ թռչնաձև զարգացման մեջ՝ տալիս են տարբեր ստադիաներ, որոնց նպաստում են աշխատանքի պրոցեսի մեջ զուգահեռ կատարվող խիստ տեղաշարժերը՝ կապված հավանաբար կրակի գյուտի, քարի և հետագայում մետաղի մշակման, աշխատանքի հասարակական բաժանման և այլնի հետ: Բայց Ն. Մառը լեզուների յուր ստադիալ դասակարգման հիմքում այնուամենայնիվ դրեց՝ դեռ 1827 թվից մեզ հայտնի լեզուների ձևաբանական դասակարգումը:

Ինչպես հայտնի է, այդպիսի հին բաժանման սկզբունքն էր մասնիկների առկայությունը կամ բացակայությունը, այդ մասնիկների դերը, ինչպես և հենց իրեն արմատի ձևափոխելիությունը: Առաջին «անձև» խմբի մեջ մտցնում են

այն լեզուները, որոնք բառաստեղծման և բառերի քերականական ֆունկցիոնալության (հարաբերություններ, կատեգորիաներ) համար դիմում են շատ ուրիշ հայտնի ձևաբանական միջոցների («տեխնիկայի»), բայց ոչ մասնիկների (աֆիքսների) օգնության: Այդպիսիք են, օրինակ՝ շինական խմբի լեզուները (շինական, տիբեթական, վիետնամական) կամ Սուդանի նեգրերի լեզուների մի մասը: Երկրորդ ձևաբանական տիպին հատկացնում են այսպես կոչված կցական (ադլյուտինատիվ) լեզուները, որտեղ անփոփոխելի արմատին կից ատկա են արդեն մասնիկ-կցույթները, որոնք անշատանշատ արտահայտում են բառակազմական կամ քերականական ֆունկցիա և քանակով կարող են հասնել մինչև մի տասնյակի, ըստ որում նրանց կցվածությունը արմատին բավական շարժունակ է: Այդպիսիք են, օրինակ՝ ուրալալթայան (թյուրքական) լեզուները, ամերիկյան հնդկացիների լեզուները, որոնք նաև կոչվում են բազմահամադրական (պոլիսինթետիկ), և այլն: Երրորդ, առավել զարգացած ձևաբանական խմբին պատկանում են այսպես կոչված թեքական (ֆլեկտիվ) լեզուները, որոնց մեջ արդեն ինքը արմատը յուր կերպափոխումներով և մասնիկներով տալիս է ձևակազմության ամենամեծ հնարավորությունները, ըստ որում այդ մասնիկները և թեքույթները (ֆլեկտիա) շատ ավելի սերտ են կապվում արմատին և իրենց մեջ ունենում են մի քանի ֆունկցիաներ: Այդպիսի լեզուներ են հնդեվրոպական և սեմական լեզուները: Լինում են և լեզուների լատեր տիպեր, այսինքն՝ անցողական լեզուներ, ինչպիսիք են կովկասյան լեզուները:

Բաժանում են նաև համադրական և վերլուծական լեզուների, որոնք ընդհանուր տիպոլոգիայի նկատմամբ մարող են ունենալ միայն կողմնակի կամ ավելադիր նշանակություն:

Բայց ն. Մաուր ձևաբանական այդ դասակարգումը օգտագործեց խիստ միտումնավոր և գոհհիկ-սոցիոլոգիական տեսանկյունով, որը մենք, իհարկե, ժխտում ենք: Նա ասում է. «Մտածողության փոփոխությունները հնչյունային խոսքի կառուցման երեք սխեմաներ են, որոնք ամբողջությամբ բխում են տնտեսության զանազան սխեմաներից և նրանց

համապատասխանող սոցիալական կառուցվածքներից. 1) նախնադարյան կոմունիզմից՝ խոսքի համադրական կառուցվածքով, բառերի բազմիմաստությունամբ, առանց տարբերելու հիմնական և կողմնակի նշանակությունները. 2) հասարակական այն կառուցվածքից, որ հիմնված է տնտեսության զանազան ճյուղերի՝ ըստ պրոֆեսիաների երևան գալու վրա, միասնական հասարակության շերտավորման արտադրատեխնիկական խմբերի, որոնք ներկայացնում էին ցեխերի նախնական ձևը, երբ նրանց ուղեկցում է խոսքի այն կառուցվածքը, որը բաժանում է խոսքի մասերը, իսկ ֆրազի մեջ՝ տարբեր նախադասությունները, նախադասությունների մեջ՝ նրա զանազան մասերը և այլն, և ուրիշները՝ տարբեր ֆունկցիոնալ բառերով, որոնք հետագայում վեր են ածվում ձևաբանական տարրերի՝ բառերի մեջ հիմնական նշանակությունների տարբերումով և նրանց մեջ հիմնականի հետ միասին ֆունկցիոնալ իմաստի աճումով. 3) դասային կամ դասակարգային հասարակությունից, աշխատանքի տեխնիկական բաժանմամբ, թեքական վարդի ձևաբանությամբ»:

Ն. Մառը, ինչպես հայտնի է, հետագայում առաջարկեց առանձնացնել մարդկային լեզվի ծագման մեջ նաև հարեթական ստադիան, որ ընկած է թեքական և կցական ստադիաների միջև:

Ինչպես տեսնում ենք, սահմանելով լեզուների տադիակականությունը՝ կախված տնտեսական և հասարակական պրոցեսներից, Ն. Մառը լեզուների այդ տիպոլոգիական աստիճանավորումը մատերիալիստորեն հիմնավորելու քողի տակ մեզ մատուցում է սխեմատիզմ և հատարակացում: Այստեղ լեզվի և սոցիալ-տնտեսական ֆորմացիաների կապակրցման բացատրության մեջ չափազանց պարզ կերպով և անմիջականորեն հանդես է գալիս գոհճիկ սոցիոլոգիական մոտեցումը՝ քերականության պահպանողականությունը և նրա սեռերի (դասերի) ժխտմամբ, լեզվի մեջ սաղմնավորված նախադրյալների՝ դեպի հաջորդ, մտտակա ընդհանուր վիճակը դարգանալու հնարավորության ժխտմամբ և այլն, և վերջին հաշվով ամբողջ ձևաբանական պրոցեսի ժխտմամբ:

Մատի տտադիալ դասակարգման մեջ այդ հասարակացումը և գոհակացումը ցույց տվեց նաև ընկեր Ստալինը՝ «Մարքսիզմի վերաբերյալ լեղվաբանության մեջ» յուր աշխատությունում։ Հիրավի, շինարենը և սուդանական նեգրերի լեզուները պատկանում են առաջին «տտադիալ» խմբին, այսինքն՝ անձև-համադրականին, բայց այդ նշանակո՞ւմ է արդյոք, որ այդ ժողովուրդների հասարակական-տնտեսական կառուցվածքը և սոցիալական խմբավորումը միևնույնն են։ Անգլերենը հոլովման և խոնարհման մեջ կորցնում է թեքական տիպի հատկանիշները, բայց այդ արդյոք նշանակո՞ւմ է, որ անգլերենի քերականական տեխնիկայի այդ որոշ «անձևացումով» անգլիական հասարակության դասայնությունը կամ դասակարգայնությունը վերանում է։

Կարելի կլիներ լեզվի զարգացումը վերլուծել ըստ նրա սկզբնական ձևավորման փուլի (տտադիայի), այն է՝ ըստ բառ-նախադասության կամ ավելի լավ՝ բառի, որպես ձևաբանորեն չտարրորոշված նախնական դիֆուզ միտք-նախադասության՝ նման մեր անատորոգյալ բառ-պատկերացումների, ըստ տարրորոշման փուլի (տտադիայի), այսինքն՝ ըստ տարրորոշ ձևաբանական արտահայտության կամ բարդ բառ-նախադասության։ Այդ երկրորդ փուլի համար որպես նախնական ձևավորում վարելի կլինի պատկերացնել այն բառ-նախադասությունը, որը առկա է, օրինակ՝ Հյուսիսային Ամերիկայի քնիկների որոշ լեզուներում, որտեղ գոյություն ունի այնպիսի բազմահամադրական բառ-նախադասություն, ինչպես՝ օրինակ, i-n-i-a-l-u-d-am «ահա-ես-այս-նա (իզական) համար-այնտեղ-նախիրել-եկա», այսինքն՝ «ահա ես այս բանը նրա համար (նրան) նախիրելու եկա»։ Իհարկե այստեղ յուրաքանչյուր ձևույթ պետք է անկախորեն մտնի նաև այլ բառային համակցությունների մեջ, որովհետև միայն այդ ուղղությամբ իր նշանակությունը և պաշտոնով կարող է ինքնորոշվել և առանձնանալ որպես ամբողջի հակադրություն նրա մասին։ Բայց հնարք է առաջ դալիս, կարելի՞ է արդյոք ապացուցել, որ տվյալական դիֆուզ բառ-նախադասությունից տարրորոշումը տեղի է ունեցնել ըստ այդ առանձին մասն



ձևույթների, ինչպես կարելի է արտաբխից պատկերացնել այդ հնդկական inialudam-ի մեջ և այլն: Ըստ իս, ավելի շուտ այստեղ այդ առանձին հնչյունները, որպես ձևույթներ, նախօրոք զարգացած են եղել առանձին բառերից, որոնք ավելի ուշ մտած են եղել համակցված և կրճատված բառ-ցուրերի մեջ, ինչպես ունենք, օրինակ՝ նույն հնդիկների ացտեկերենում (ni-naka-kva «ես-հաց-ուտեմ»), նման մեր Нар-ком-ин-дел և այլ կազմություններին:

Նախկին ամբողջական բառերից մինչև մի հնչյունի աստիճան նման հնչյունակրճատում տեսնում ենք նաև ժամանակակից ֆրանսերենում, որտեղ k-e-s-kè-s-e «ինչ է այս, որ այս է» (=այս ի՞նչ է) բարդության մեջ ձևույթները զարգացել են վեց առանձին լրիվ բառերից: Նման երևույթներ կարող ենք տեսնել նաև ուրիշ լեզուների օրինակներով (համեմատիր հայերեն՝ եսիմ=ես ինչ իմանամ), այնպես որ պնդել, թե նախասկզբնական դիֆուզ բառ-նախադասությունը տարրազատվում և վերածվում է արդեն բարդ բառ-նախադասության կցական (բազմահամադրական) մանր ձևույթների, մենք չենք կարող:

Մյուս կողմից՝ առաջարկում են (օրինակ, Պոտեբնյան) ստադիաները տեսաբանել ըստ պատկեր արտահայտության հետագա ամբողջության և ըստ այդ պատկեր-արտահայտության տրոհմանը նրա պատկանելիությունների— բնույթի և հատկանիշների: Բայց, ինչպես տեսնում ենք, այդ մոտեցումը բանալի չի տալիս՝ լեզուների ձևաբանական զարգացումը տիպավորելու համար, լեզուներ, որոնք ունեն տարբերակնայ ձևավորում՝ իբրև զուտ լեզվական երևույթ:

Վերջապես, կան լեզվաբաններ էլ, ինչպես, օրինակ՝ Սեպիրը, որոնք արդարացիորեն քննադատելով Ա. Շլեգելի եռատիպ ձևաբանական դասակարգումը, իրենց կողմից առաջ են քաշում ավելի բարդ դասակարգում, որը լեզուների տիպավորման մեջ հենվում է ոչ միայն ձևաբանական մասնիկաֆիքսների մասնակցության կամ ոչ մասնակցության վրա, այլև հենց իրեն լեզվի վերլուծական կամ համադրական կառուցվածքի համաժամանակյա կիրառման վրա՝ բառարմատի

ներքին փոփոխելիության կամ ոչ-փոփոխելիության սկզբունքով և այլն: Վերջին ժամանակներս մեզ մոտ լեզուների տիպավորման մեջ հատկապես ընդգծում էին կառուցվածքի վերլուծականությունը կամ համադրականությունը, բայց անկասկած այդ մոտեցումն էլ չի տալիս իրական պատմական բանալի՝ մարդկային լեզվի լեզվաստեղծման պրոցեսի զարգացումը և նրա աստիճանական ձևավորումը հասկանալու համար:

Ն. Մառը 19-րդ դարի առաջին կեսի մի քանի հնդեվրոպաբանների նման հակված էր գերազնահատել լեզուների ձևաբանական դասակարգումը, թեպետ կային նաև գիտնականներ, ինչպես Ա. Մեյեն, որոնք պատրաստ էին այդ դասակարգման գիտական նշանակությունը բոլորովին ժխտել: Այդ և նման դասակարգման մեջ կա բանական հիմք. այդ լեզուների տիպերը անկասկած տարբեր են: Սրանց և հասարակական-տնտեսական կամ կուլտուրական պայմանների միջև անմիջական կապ չի երևում: Մյուս կողմից, լեզվական տիպերի այդ տեսակները, յուրաքանչյուրը իր սպեցիֆիկայի մեջ, նոր բառեր և քերականական հարաբերություններ ստեղծելու համար ունեն համապատասխան ձևաբանական միջոցներ: Այդ սպեցիֆիկան կարող է զարգացած լինել ավել կամ պակաս չափով՝ կախված հասարակության լեզվակառուցողական պահանջներից: Գլխավորը այդ է: Իրավացի է ընկեր Ստալինը, երբ գրում է. «Ո՞ւմ է հարկավոր, որ բառերի փոփոխությունները լեզվի մեջ և բառերի զուգակցումը նախադասության մեջ կատարվեն ո՛չ թե ըստ գոյություն ունեցող քերականության, այլ միանգամայն ուրիշ կերպ» (Ի. Ստալին, «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ», էջեր 18—19):

Վերջապես՝ մենք չենք կարող լեզուների ձևաբանական այդ խմբավորման առկայությունը և պատմական նշանակությունը ամբողջովին ժխտել, ինչպես և չենք կարող այս կամ այն լեզվի տարբերատիճան ձևաբանական (ըստ Մառի՝ «ստադիալ») տիպը վերագրել սկզբնական քառատարր լեզվական միջուկի տարբերատիճան զարգացմանը, մի միջուկ,

որ ըստ Մառի ընկած է աշխարհի բոլոր լեզուների հիմքում։ Այստեղ ստադիականությունը գործ շունի։ Երբեմն կարծես թե կապ է երևում լեզուների տիպերի ձևաբանական, և ծննդաբանական կողմերի միջև՝ առանձնապես ձևաբանական տիպավորման օգտագործման մեջ՝ լեզուների այս կամ այն խմբում ընդհանուր ծննդաբանական պրոբլեմների մասմանման գործում։ Կան մի քանի դեպքեր, որոնք հաստատում են այդ պատմական հանդիպումը կամ փոխադարձ պայմանավորվածությունը։ Օրինակ՝ սուդանական նեգրերի մի քանի լեզուներ գոյականների մեջ գործադրում էին հատուկ մասնիկներ, որոնք նշում էին այդ նեգրերի մտածողության մեջ այսպես կոչված գոյականական դասերի առանձնացումը, ինչպես օրինակ՝ բառերի սեռի, առարկայնության, ձևի և այլն։ Բայց երբ առարկաների և երևույթների այդ գնահատումը նրանց մոտ արդեն վերացավ, ապա բառերի այդ նախկին հնչյունական ցուցիչները ձուլվեցին արմատների հետ և դարձան անբաժանելի, այսպես ասած՝ անձև, իսկ նրանց լեզուները մի ձևաբանական տիպից անցան ուրիշ ձևաբանական տիպի։

Կամ, օրինակ, կովկասյան, փոքր ասիական (ազիանիկ) և սեմական հին լեզուների ծննդաբանական դասակարգման մեջ տիպավորումը կամ, ավելի լավ է ասել, կառուցվածքը բոլորովին էլ անկարևոր չէ այս կամ այն ընդհանուր քերականական կարգի (կատեգորիայի) դրսևորման համար։ Այդ լեզուների մեջ բայական ձևը նախադասության մեջ ցույց է տալիս ոչ միայն սուբեկտը, այլև օբեկտը՝ նույնիսկ երբ այդ օբեկտը առկա է որպես առանձին բառ։ Եվ չնայած սեմական ու ազիանիկ լեզուներում օբեկտային մասնիկը ընկնում է բայի վերջում, սակայն այդ դեռ նշան չէ նրանց միջև եղած հատուկ ծննդաբանական մոտիկության, որովհետև նրանց միջև բառական և քերականական այլ կարգի տվյալները չեն բավականացնում կամ բացակայում են։ Նույն բացասական եզրակացությունը կարելի է անել ազիանիկ և կովկասյան լեզուների ցեղակցության վերաբերյալ, որոնց մեջ օբեկտային մասնիկները դրվում են կամ ձևավորված բայի

վերջում (ազիանիկներում), կամ էլ սկզբում (կովկասյաններում)՝ բայց այլ լեզվաիրավությունների մերձեցման բացակայությամբ: Բայց երբ ուրարտական և խոտիտական ազիանիկ լեզուներում այդ սեռային կատեգորիայի ձևացումը համընկնում է ըստ տեղադրման և բացի այդ կան նաև այլ ընդհանուր լեզվական հանդիպումներ, ապա այստեղ համարձակորեն կարող ենք ասել, որ նրանց ձևաբանական-կառուցվածքային ձևականությունը արդեն ձեռք է բերում պատմական արժեք՝ նրանց ընդհանուր ծագումնաբանական աղբյուրը կամ ցեղակցությունը սահմանելու համար:

Ինչպես երևում է լեզուների դասակարգման իմ համառոտ տեսությունից, ծագումնաբանական դասակարգումը ձեռք է բերում տվյալ կոնկրետ լեզուների պատմության համար դերակշռող արժեք, մի քան, որ այնպես անարդարացիորեն անտեսվում էր ն. Մառի կողմից՝ որպես բուրժուական կամ նույնիսկ ռեակցիոն տեղեկություն մարդկային խոսքի կուլտուրայի զարգացման ուսմունքի մեջ: Իսկ ձևաբանական դասակարգումը լեզուների տիպավորման սահմանումի իմաստով անմիջելի է, բայց պետք է գնահատվի ոչ այն մտքով, ինչպես ն. Մառի մոտ, որը զուտ ձևական տիպոլոգիական նրանց սահմանափակումը համարում էր որպես թի ստադիաներ խոսքային կուլտուրայի զարգացման գլոտոգոնիայի մեջ և այդ տիպերի փոխակերպությանը վերագրում էր թուլջբաձեությունը՝ որպես անմիջական ֆունկցիա՝ նրանց ժամանակակից հասարակական-արտադրական և կուլտուրական ֆորմացիաներից բխած:

Ձևաբանական այդ տիպավորման պատմական արժեքը, անկասկած, ստորադաս է ծագումնաբանականին և ընդհանրապես զուտ տեսական հետաքրքրություն է ներկայացնում:

Ն. Մառի «Երեզլի նոր ուսմունքի» շատ դրույթների, մասնավորապես ծագումնաբանական դասակարգման նկատմամբ նրա քաջասական վերաբերմունքի և խոսքային կուլտուրայի զարգացման «ստադիալ» վերլուծման քննադատության կապակցությամբ մենք չենք կարող չնշել այդ «ստադիալ» վերլուծման հետ կապված նաև մի քանի պրոբլեմներ ու հարցեր:

Դրանցից է, նախ և առաջ, լեզվի այսպես կոչված «հնէաբանությունը»: Ն. Մառը հաճախ է գործածում այդ տերմինը, որ վերցված է բնական գիտությունների զինանոցից: Ես հասկանում եմ, երբ հնում ապրած և մեզ անծանոթ կենդանական մի էակի որևէ մնացորդի հիման վրա գիտնականները մոտավորապես վերականգնում են նրա ընդհանուր մարմնական տեսքը, բնական հակումները, հարմարվողականությունը և այլն: Բայց երբ մարդիկ փորձում են վերականգնել տվյալ լեզվական վերապրուկի վաղեմի ձևը և նշանակությունը (ֆունկցիան), վերապրուկ, որը միայն քարացած ձևով է մնացել, ապա այստեղ խնդիրը անհամեմատ ավելի բարդ է: Այստեղ կարող է շատ բան մտահայեցողական և գուշակողական լինել, և շատ բնական է, որ այդ վաղեմի ձևի և նրա կոնցեպտուալ բովանդակության սահմանումը կարող է հաստատվել միայն և միայն տվյալ լեզվի հին ձևաբանական կառուցվածքի և նրա հին մտածողության տվյալների վրա՝ համապատասխան հասարակական կառուցվածքի ժամանակ: Այդպիսի վերապրուկների կամ մնացուկների, ինչպես և ընդհանրապես լեզվի յուրաքանչյուր բառի ու ձևի ատուգաբանությունների մարքսիստական մեկնաբանությունը կարող է տրվել միայն նման պատմական, առավել կամ պակաս հավաստի տվյալների հիման վրա: Այս տեսանկյունից մատչան «հնէաբանությունը», որպես տերմին և առանձին երևույթ, բոլորովին ավելորդ ծանրաբեռնություն է: Առանց այն էլ լեզվաբանությունը մի ժամանակ իր մեթոդոլոգիայով ուժեղ չափով գտնվում էր բնական գիտությունների և նրանց տերմինաբանության գերության մեջ:

Երկրորդ՝ ես կուզեի համառոտակի շոշափել նաև մի բանի այլ հարակից հարցեր: Սրանց վերաբերում է, օրինակ, լեզուների խաչավորման հարցը: Այստեղ էլ Ն. Մառի հայացքները մեծ մասամբ սխալ են, երբ նա անտեսում է ենթակա թույլ ժողովրդի լեզվի լիովին կլանման հնարավորությունը իշխող բազմամարդ ցեղի կամ ժողովրդի ավելի զարգացած լեզվի կողմից: Նա սխալվում է նաև այն ժամանակ, երբ լեզուների խաչավորումը տեսաբանում է որպես երկու լեզու-

ների փաստերի հավասարաչափ քանակական ձուլում (մի ժամանակ նա ընդունում էր հայերենի ծագումնաբանական բովանդակությունը որպես արիա-հաքեթական հավասարաչափ լեզվական մի կացություն): Ընդհանրապես նա խաշավորման (խառնման) գործոնը լեզվի ծագման և զարգացման մեջ, ծագումնաբանական հարցերը վճռելիս, շատ էր գերադնահատում: Այդ հարցերի լուծմանը իսկական մարքսիստական դիրքերից մոտեցավ ընկեր Ստալինը, քննադատություն ենթարկելով վերոհիշյալ մատչյան դրույթները:

Եիշտ չէ՞ Մաոի նաև այն դրույթը, որ վերաբերում է ժողովուրդների գաղթների դերի թերազնահատմանը և ժխտմանը, որ, ինչպես հայտնի է, հանրահայտ իրողություն է: Իսկ չէ՞ որ գաղթման այդ կողմնակի երևույթը չէր կարող առաջ չբերել ցեղերի նոր վերաբաշխում և նոր միություն և վերջին հաշվով չէր կարող չնպաստել նոր ցեղերի ու լեզուների խառնրմանը և կազմավորմանը: Ծագումնաչին բնույթի այսպիսի սահմանումների կոտորետությունը և պատմականությունը ամեն մի գիտապատմական և լեզվաբանական մոտեցման անհրաժեշտ պայմանն է: Այստեղ ընդհանուր ֆորմուլան և մեկնաբանությունը գործին բոլորովին չեն օգնի:

Ի եզրակացություն մի բան միայն կարելի է ասել, որ կանգնած լինելով հակապատմական արքայադատ-տեսական հողի վրա, իր մտածին չորս տարրերով և մտահայեցողաբար մեկնաբանելով լեզուների զարգացման դիալեկտիկան, որպես վերևից պարտադրված երևույթ, Մաոն իր բազմամյա գիտական ողջ ջանքերով ընկավ փակուղու մեջ և կրախի մատնվեց:

Նրա մոտ տեսնում ենք զուտ մեխանիստական ինքնահավադրում հնդեվրոպական լեզվաբանության բոլոր դրույթներին, — մի լեզվաբանության, որ ունեւր յուր մեծ նվաճումները՝ շնորհիվ իր աշխատանքին նպաստող պատմահամեմատական վերլուծման մեթոդի կիրառման:

Բացի դրանից, մինչ մատչյան ամբողջ լեզվաբանությունը մեկնաբանելով որպես զուտ բուրժուական ու ռեակցիոն, անքննադատ վերաբերվելով մի շարք աշխատությունների և

մասնավորապես իր «մատերիալիստական» սահմանումներին, Ն. Մառը խրվեց գիտական ամբարտապանության և մեծամոլության մեջ, մերժելով ամեն տեսակի միջամտություն և քննադատություն: «Ընգվի նոր ուսմունքի» գծով իր ելույթների սկզբնական շրջանում տեսնելով այդ «ուսմունքի» արհամարհումը համարյա ամենուրեք, նա դեմոնստրատիվ կերպով շուր զեկուցումներին փակցնում էր «հեքիաթներ» պիտակը («Տատիկի հեքիաթներ»): Նա միտումնավոր կերպով յուր հակվածությունն էր ցույց տալիս, ասենք, բրիչի և բրիչային կուլտուրայի կողմը, քան, օրինակ՝ միլոսյան Վենեթայի ժամանակաշրջանի, հայտարարելով «կորչի միլոսյան Վենեթան»: Կարելի է կարծել, որ Հերոստրատի դափնիները Մառին հանգիստ չէին տալիս: Հիշենք նաև նրա պնդումը, որ թյուրքերը Փոքր Ասիայում բնիկ են եղել՝ հակառակ բոլոր պատմական տվյալների՝ սկսած խեթական ժամանակներից մինչև մեր թվականության միջին դարերը: Բայց թողնենք այս բոլորը, թեպետ «ինչ որ գրված է գրքով, չես կարող ջնջել կացինով»: Արդեն յուր կյանքի վերջին օրերում նա կարծես թե գիտակցեց, որ հարկավոր է «վերադառնալ Կովկաս», ինչպես հայտարարել էր նա իր աշակերտներից մեկին: Այդ ցույց է տալիս, որ Ն. Մառը դրական գնահատական էր տալիս յուր գիտական գործունեության միայն առաջին շրջանին, ունենալով ավելի կոնկրետ ու պատմական փաստեր վուլկանագիտության, վրացագիտության և հայագիտության վերաբերյալ, քան երկրորդ շրջանին (1924 թվից), որը գիտական աշխարհի կողմից դիմավորվեց խիստ բացասաբար: Բայց իհարկե արդեն ամեն ինչ վերջացած էր, և եթե Մառը գոնե երբեմն կարողանում էր իրեն վերլուծման ենթարկել, ապա նրա աշակերտները, որոնք կոնկրետ լեզուների և նրանց պատմության վերաբերյալ ավելի քիչ գիտելիքներ ունեին և որոնց Մառը անարժան կերպով առաջ էր քաշում պատասխանատու պաշտոնների, օգտագործեցին «Ընգվի նոր ուսմունքի» մենաշնորհ վիճակը և իրենց ուսուցչի վաղեմի հեղինակությունը, իրենց զիրքերում դարձան քննադատությունից լրիվ ապահովված և կորցրին իսկական գիտնականի բարեխղճության


զգացումը: Նրանց ղեկավար դերը ուղղորպացիայի էր ենթարկել լեզվաբանական աշխատանքի ամեն մի հնարավորությունը, — մերժվում էր ամեն տեսակ քննադատական միտք, հակառակ մեր առաջնորդի ցուցմունքների և մեծ լավագույն գիտնականների սպասելիքների:

Լեզվաբանություն մեջ առաջացած այն լճացումից և փակուղուց, որ առաջացել էր «նոր ուսմունքի» մենաշնորհ դիրքից և մարքսիստական ու սովետական լինելու նրա հավակնությունից, մեզ հանեց ընկեր Ստալինի հանձարը, որ այնպես խորը և բաղձալիցմանի կերպով լուծեց բազմաշխույժ լեզվաբանական պրոբլեմներ, որոնք արդեն դարձել են մեր Սովետական Միության և ամբողջ առաջավոր աշխարհի գիտնականների սեփականությունը: Մառյան կեղծ մարքսիստական «ուսմունքին» հասցվեց կործանիչ հարված: Ընկեր Ստալինը գրում է. «Կերացնել արակչեկյան ռեժիմը լեզվաբանության մեջ, հրաժարվել Ն. Յա. Մառի սխալներից, արմատավորել մարքսիզմը լեզվաբանության մեջ, — այս է, իմ կարծիքով, այն ուղին, որով կարելի կլինի արդյացնել սովետական լեզվաբանությունը»:

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանություն խընդիրները» աշխատությունը, իր հիմք դնող ցուցմունքներով և լեզվաբանական բաղձաթիվ պրոբլեմների վերլուծությամբ, մեզ, սովետական գիտնականներին տալիս է նոր լիցք և ոգևորություն:

Նվ կարելի է չկատկածել, որ այդ զուլացուցիչ ու թարմացուցիչ ամպրոպից հետո, որ տեղի ունեցավ մառյան կեղծ գիտության հեղձուցիչ ու նեխված մթնոլորտում, մեր սովետական լեզվաբանությունը կպիթի ու կծաղկի: Ընթանալով ընկեր Ստալինի ցույց տված ուղիով՝ «լեզվաբանության մեջ մարքսիզմը ընդգրկելով» ուղիով, նա կհարստացնի մեր գիտությունը բաղձաթիվ կապիտալ երկերով: Միայն այդ ճանապարհով սովետական լեզվաբանությունը կարդարացնի իր առավելությունը՝ բուրժուական լեզվաբանության նկատմամբ, այդ թվում նաև տրադիցիոն հնդեվրոպաբանության նկատմամբ՝ վերջինիս սխեմատիզմով ու ֆորմալիզմով, պատմա-


Համեմատական մեթոդի շարաշահումով և իսկական պատմա-
կանության բացակայությամբ, որը արտահայտվում է մաս-
նավորապես նրանում, որ հնդեվրոպաբանությունը անպայ-
մանորեն բոլոր դեպքերում ելնում է «նախալեզվի» կոնցեպ-
ցիայից:



Ռուս. թարգմ. Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հրատարակչության խմբագիր Ա. ՈՍԿԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր Մ. ՄԻՆԱՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրել է Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է աշտարակության 18/XII 1950 թ., ստորագրված է տպագրության 28/III 1951 թ., ՎՖ 01202, հրատ. 773, պատվեր 576, տիրամ 2000 1,5 տպագր. մամուլ, մեկ մամուլում 34560 տպանիշ:

Հայկական ՍՍՌ ԳՍ տպարան, Երևան, Արտվյան 124:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0013493

9122 + 104.

ЦЕНА

~~ДП~~

12653